



ՎԱՐԱԳԸ ԵՒ ՉԱՏԿՈՒԱՆ ՇԱԲԱԹԸ

Ծաղկագարդի օրը Վարագ իր նոր շապիկն ու տաբատը հագած, ձեռքը ձիթենիի ճիւղով զարդարուած մեծ ճերմակ մոմ մը բռնած՝ ընտանիքին հետ եկեղեցի կ'երթայ:

Եկեղեցին լուսաւորուած ու զարդարուն էր ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերով:

Վարագ եկեղեցի կը մտնէ, մոմ կը վառէ ու կ'աղօթէ:

Վարագ դարձեալ ստրկած էր, թէ Ծաղկագարդի օրը, Յիսուս իշուկի մը վրայ նստած Երուսաղէմ կը մտնէ եւ ժողովուրդը կը վազէ ուրախութեամբ զայն դիմաւորելու: Փոքրիկները իրենց ձեռքը ձիթենիի եւ արմաւենիի ճիւղեր կը բռնեն դիմաւորելու իրենց «Խաղաղութեան Թագաւորը»:

Վարագն ալ բոլորին նման կը վառէ իր մեծ մոմը եւ թափօրին ետեւէն կը քալէ:

(Շարունակելի)

ԾԱՂԿԱՉԱՐԴ

Ս. Յարութեան տօնին նախորդող Կիրակին կը կոչուի՝ ԾԱՂԿԱՉԱՐԴ: Ան Յիսուսի դէպի Երուսաղէմ յաղթական մուտքին յիշատակումն է, երբ Յիսուս ասանակի մը վրայ մուտք գործեց Երուսաղէմ ու շատեր իրենց հանդերձները ճամբուն վրայ փռելով դիմաւորեցին տերը, կանչելով ու աղաղակելով «Ովսաննա՛»:

Ծաղկագարդը հռչակուած է նաեւ մանուկներու օրհնութեան օր:

Ծաղկագարդի օրը առաւօտեան, եկեղեցիները ձիթենիի ճիւղեր կ'օրհնուին ու կը բաժնուին ժողովուրդին: Ձիթենին իմաստութեան, խաղաղութեան, յաղթանակի եւ փառքի խորհրդանիշն է:

Ամէն տարի այս օրը հայկական իւրաքանչիւր բնօրրան, կը ծաղկի ու այդպիսով կ'ազդարարէ զարնան գալուստը: Ան կը խորհրդանշէ նաեւ բնութեան զարնանային զարթօնքը:



ԹԻՒԷ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇԽԵՆԻ-ՇԱՀԻՆԻ,
ՆԿԱՐԱՍԱՐՈՒՅ՝ ՈՒՅՅԻ ԲԵՐՈՇԵՆՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՉՆԴԿԱՅԱԻՆ

Այս թռչունը կ'ապրի Հայաստանի բարձր լեռներուն վրայ, յաւերժական ձիւնի սահմաններուն մօտ: Նոյն բարձրութեան վրայ ամառը կը գտնուին նաեւ վայրի ոչխարներ: Երբ լեռնային հնդկահաւերը որսորդի կամ գայլի մը ներկայութիւնը զգան, տազնապահար կը սուլեն: Այս սուլոցէն վայրի ոչխարները կ'իմանան վտանգը եւ կը փախչին: Ուրեմն, հայկական լեռնային հնդկահաւերը ոչխարներուն պահակներն են:

Այս թռչունները երամով կը թռչին ու ձայներ կ'արձակեն: Անոնց տեսքը իսկական կաքաւի կը նմանի, սակայն գրեթէ տասը անգամ աւելի խոշոր կ'ըլլան: Անոնց հիմնական սնունդը խոտի սերմերն են:

Վայրի հնդկահաւերը կը գտնուին Ագարակի, Բազումի եւ Վարդենիսի բարձունքներուն վրայ:




ՄԻ՛ ԸՍԵՐ

Գլպան
Մայրամ
Պահրան
Ելլալ
Մտնալ

ԱՅԼ՛ ԸՍԷ՛

Գրպան
Մարիամ
Պահարան
Ելլել
Մտնել



ԳՈՒՆԱՒՈՐԷ՛ հետեւեալ պատկերը:

ՄՈՎԼԻՆ

Առաւօտ էր. խաղաղ առաւօտ: Արեւուն առաջին շողերը պահուրտուք կը խաղային բնութեան հետ: Մերթ կը թաքնուէին, մերթ կը յայտնուէին:

Անտառին մէջ ամեն ոք քնացած էր: Միայն ջուրերն էին, որոնք ուրախ-զուարթ կը կարկաչէին ու տերեւները՝ որոնք զգփիւռին հետ կը կատակէին ու կը սօսափէին:

-Մա՛, մա՛... մա՛, մա՛...

-Այս ո՞վ է, որ կը խանգարէ անտառին լռութիւնը,- կը մռլտայ Պաքիրա յովազը որջին մէջէն ու կը փութայ ձայնին ուղղութեամբ:

Գետակի ափին խորտակուած նաւակ մը կը տեսնէ ու անոր մէջ մանկիկ մը, որ թաթիկները խանձարուրէն դուրս հանած՝ կու լար ու կը խնդար:

-Այս ի՛նչ անուշիկ ձագուկ է,- կը մռլտայ Պաքիրա յովազը ինքնիրեն: Արդեօք ո՞ր ես անոր հայրն ու մայրը. ես ոչ ոք կը տեսնեմ շուրջս: Քիչ մը սպասեմ, թերեւս հիմա կու գան,- կ'ըսէ ու կը պահուրտի ծառերուն ետեւ:

Ժամ մը կ'անցնի, երկու, երեք, տաս... ու ոչ ոք կ'երեւայ: Յովազը կը մեղքնայ մանկիկին ու կը տանի զինք իր բարեկամներուն՝ գայլերուն որջը:

Մամա ու պապա գայլերը տեսնելով անտեր մանկիկը, կը մեղքնան անոր ու կ'որոշեն որդեգրել զայն:

-Ձագուկներս,- կ'ըսէ մայր գայլը դառնալով ձագուկներուն,- այս մանկիկը մեր մօտ պիտի մնայ. Ձեր եղբայրը պիտի ըլլայ: Ի՛նչ կ'ուզէք կոչնք զինք:

-Մոկլի՛,- կ'առաջարկէ գայլիկներէն մէկը, քանի որ ճիշդ գորտիկի կը նմանի ու մուշտակ չունի:

Այսպիսով, Մոկլին կը դառնայ գայլերու ընտանիքին մէկ անդամը. կը դառնայ մարդագայլ: Անոնց պէս կ'ուտէ, կը խօսի, կ'ոռնայ ու անոնց հետ կը քնանայ:

Հայր գայլը անոր ճարպիկութիւն ու որսորդութիւն կը սորվեցնէ, իսկ Պաքիրա Յովազը՝ անտառի օրէնքները: Այնպէս, որ ան շատ լաւ կը հասկնար թռչուններուն եւ օձերուն լեզուն, խոտերուն ամեն մէկ շրշիկնի եւ տերեւներուն ամեն մէկ շարժման

իմաստը. կրնար նաեւ յովազի պէս արագ-արագ ծառ մագլցիլ ու կապիկի պէս ճիւղէ-ճիւղ ստոստել:

Մոկլին ուներ նաեւ հաւատարիմ բարեկամներ, որոնց հետ ուրախ ժամեր կ'անցընէր: Անոր ամենասիրելի բարեկամը՝ Պալու արջուկն էր, որ իրեն ծառերուն վրայէն հնդկընկոյզ փրցնէլ, պանան քաղէլ ու մեղր ճարել կը վարժեցնէր:

Խորամանկ Քահա օձը, երկար պոչը անոր մարմնին շուրջ գալարելով, չարաճճիութիւններ կ'ընէր:

Մոկլին գայլ եղբայրներն ու բարեկամները յաճախ կը զգուշացնէին զինք Քահա օձէն: Բայց մանաւանդ կը զգուշացնէին զինք Շեր Խանէն, շերտաւոր վագրէն, որ անտառի բնակիչներուն ու մանաւանդ գայլերուն սարսափն էր: Թեպէտ այդ օրերուն ան այդ կողմերը չէր, բայց ուր որ էր պիտի յայտնուէր ու այն ատեն... վայ եկեր էր Մոկլիին:

Շեր Խան կ'ատեր մարդիկը, որովհետեւ անոնք ուժեղ էին ու միշտ յաղթական: Շաբաթ մը ետք անտառի բնակիչները իրարու լուր կու տան. «Գիտէ՞ք, թէ Շեր Խան վերադարձած է մեր կողմերը»:



Լուրը կը հասնի նաեւ գայլերուն: Անոնք ալ անմիջապէս կը դիմեն իրենց առաջնորդ՝ իմաստուն Աքելային, որ ժողովի կը հրաւիրէ զանոնք ու կ'ըսէ.

- Ինչպէս տեղեակ էք, Շեր Խան վերադարձած է մեր կողմերը: Եթէ ան իմանայ, որ մենք մարդագայլ մը կը պատսպարենք մեր մօտ, վտանգը կրնայ կրկնապատկուիլ ե՛ւ մեզի ե՛ւ Մոկլիին համար: Ուրեմն պետք է ամեն գնով Մոկլին հեռացնենք մեր քովէն: Մոկլիին գայլ եղբայրները լսելով Աքելային խօսքերը շատ կը յուզուին: Աքելան կը շարունակէ.

- Թեպէտ մեզի համար ցաւ է բաժնուիլ Մոկլիէն, բայց եւ այնպէս այս որոշումը օգտակար է ե՛ւ իրեն ե՛ւ մեզի համար:

Վոհմակը համամիտ կը գտնուի:

Պաքիրան կ'երկրորդէ Աքելային խօսքերը:

- Մոկլին ծնողք չունի. Ան անտեր ու անտիրական է: Մենք պետք է, որ տեր կանգնինք անոր: Ես մօտակայ գիւղ մը գիտեմ, ուր Մոկլիին նման մարդիկ կ'ապրին, վաղն իսկ հոն կը տանիմ զինք ու հոն կը ձգեմ:

Յաջորդ օր Պաքիրան ու Մոկլին կը մեկնին դէպի գիւղակ:

Ճամբան Մոկլին կը հանդիպի իր սիրելի բարեկամներուն՝ Պալու արջուկին, Քահա օձին եւ փիղերուն: Մինչեւ ուշ ատեն անոնց հետ կը խաղայ, կը կատակէ ու երբ գիշեր կ'ըլլայ, Պաքիրային հետ կը մագլցի ծառի մը վրայ ու յօգնած՝ կը քնանայ:

Շեր Խան լուռ կը հետեւէր անոնց:

Արեւու առաջին շողերուն հետ յովազն ու Մոկլին կ'արթնան: Յովազը Մոկլիին կը յայտնէ վոհմակին որոշումը ու կը թելադրէ հետեւիլ իրեն:

Մոկլին անակնկալի եկած կը բացագանչէ.

- Անկարելի է, ես չեմ հեռանար անտառէն: Հոս է իմ տունս: Դուք էք իմ ծնողքս ու ընկերներս:

Յովազը ի գուր կը ջանայ համոզել զայն:

Մոկլին կը փախչի. «Ո՛չ, ո՛չ, չեմ հեռանար անտառէն. չեմ բաժնուիր իմ գայլ եղբայրներէն», կը գոռայ ու կը կորսուի թաւուտ մացառներուն մէջ:

(Շարունակելի)

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երաժշտութիւնը ձայնային եւ գործիքային հնչիւնները համակարգող արուեստն է: Հազարաւոր տարիներէ ի վեր մարդիկ երաժշտութեամբ կը զբաղին: Նախապէս մարդիկ միջոցը չունէին իրենց նուազը արձանագրելու եւ վերարտադրելու: Ներկայիս, կարելիութիւնը ունին ժապաւենի կամ ձայնապնակի վրայ արձանագրելու եւ վերարտադրելու երաժշտութիւնը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԹԻՏԻՕ

Արձանագրութեան սթիտիոյի մը մէջ, ամէն երաժշտական գործիք եւ ամէն ձայնաւոր մաս կ'արձանագրուի զատ ժապաւենի վրայ, ինչ որ կարելի կը դարձնէ ձայներու յաւելումը: Երաժիշտները կը նուազեն սենեակի մը մէջ, մինչ ձայնի մասնագետները իրենց գործիքներով կ'աշխատին ուրիշ սենեակի մը մէջ:

ԽՏԱՍԿԱԲԱՌԱԿԻ ՄԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Սկիզբը, ապակեայ ձայնապնակ մը կը ծածկեն կերպընկալի բարակ խաւով մը: Մինչ ձայնապնակը կը դառնայ, *լազերի* (laser) ճառագայթ մը ակօսիկ մը կ'արձանագրէ կերպընկալին վրայ: Ապա, ապակեայ ձայնապնակին ժխտականը կը պատրաստեն եւ արձանագրութեան բաժինը, որ ճառագայթով փորուած էր, ցցուն մասերու կը վերածուի:

Այս ժխտական մասը կը գործածուի տպելու խտասկաւառակը, որուն երկու երեսներէն մէկը ծածկուած է կերպընկալով, իսկ միւսը՝ պաշտպանիչ խաւով մը:

ՍԹԵՐԻՕ ՁԱՅՆ

Սթերիօ ձայնագրութեան համար՝ պէտք է ունենալ երկու լսողական շրջապատ: Կ'արձանագրեն գործածելով զանազան մանրաձայներ, որպէսզի իւրաքանչիւր ձայն եւ երաժշտական գործիք առանձին արձանագրուի: Արձանագրուած ձայները վերջաւորութեան կը խմբուին միեւնոյն երիզին վրայ:

